

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«---» ----- 2017թ.

N-----Ա

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՄԱՆՈՒԿ ՄԱԼԽԱՍՅԱՆԻ ՀԻՇՍԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ  
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության **1999** թվականի օգոստոսի **31**-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N **551** որոշմամբ հաստատված կարգի **2**-րդ կետը՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

Տալ համաձայնություն պրոֆեսոր Մանուկ Մալխասյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մաշտոցի պողոտա հ. **9** հասցեում փակցնելու համար:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «ՄԱՆՈՒԿ ՄԱԼԽԱՍՅԱՆԻ ՀԻՇՍԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պրոֆեսոր Մանուկ Մալխասյանը ծնվել է **1906**թ. Վանի նահանգի Կեմ գյուղում: Հայոց մեծ եղեռնի ժամանակ վերաբնակվել է Վաղարշապատում, որտեղ էլ **1925**թ. ավարտել է դպրոցը: **1930**թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետը՝ միաժամանակ **1929** թվականից աշխատելով նույն բուհի խաղողագործության և գինեգործության ամբիոնում:

**1930**թ. Երևանի գյուղատնտեսական ինստիտուտի /ներկայիս Հայաստանի ազգային ագրարային համալսարանի/ կազմավորումից հետո Մանուկ Մալխասյանը **1930-1933**թթ. սովորել է ինստիտուտի գինեգործության և այգեգործության ամբիոնին կից ասպիրանտուրայում, այնուհետև՝ աշխատանքի անցել նույն ամբիոնում՝ **1937-1939**թթ. պաշտոնավարելով որպես Այգեպտղաբանջարաբուծական ֆակուլտետի դեկան:

**1939**թ. նա պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Մեկ տարի անց Մալխասյանին շնորհվել է դոցենտի, իսկ **1961**թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում:

**1938-1946**թթ. և **1954-1961**թթ. նա եղել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտի խաղողագործության և գինեգործության ամբիոնի վարիչ: Հրատարակել է **50**-ից ավելի գիտական աշխատանքներ՝ մենագրություններ, գիտական հոդվածներ և այլն:

Մանուկ Մալխասյանը **1941-1949**թթ. ղեկավարել է ՀԽՍՀ Հողժողկոմատի խաղողագինեգործական գիտահետազոտական կայանը, որը **1943**թ. վերակազմավորվել է ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի խաղողագործության և գինեգործության գիտահետազոտական ինստիտուտի: **1950-1954**թթ. նա եղել է ՀԽՍՀ գյուղմինիստրության խաղողագործության և պտղաբուծության վարչության պետ:

**1956**թ. Խաղողագործության և գինեգործության ու Պտղաբուծության գիտահետազոտական ինստիտուտների միավորումով ստեղծվել է ՀԽՍՀ Գյուղատնտեսության նախարարության խաղողագործության, գինեգործության և պտղաբուծության հայկական գիտահետազոտական ինստիտուտը, որտեղ **1961-1966**թթ. Մանուկ Մալխասյանը շարունակել է իր գիտահետազոտական գործունեությունը:

Մանուկ Մալխասյանը մահացել է **1966**թ. Երևանում:

Պրոֆեսոր Մանուկ Մալխասյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մաշտոցի պողոտա հ. **9** հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի «Խաղողապտղագինեգործության գիտական կենտրոն» մասնաճյուղի տնօրեն Ֆ. Հարությունյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության **1999** թվականի օգոստոսի **31**-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N **551** որոշմամբ հաստատված կարգի **2**-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**«ՄԱՆՈՒԿ ՄԱԼԽԱՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Մանուկ Մալխասյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**«ՄԱՆՈՒԿ ՄԱԼԽԱՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Մանուկ Մալխասյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**